և ես ի գերեզմաներն գնացի վասն մի ժողովրդեան Զիմառցոյ։

Նոյեմբեր ամիս օր Շաբաթ։

Կիրակի (2 Նոյ.) ընդ Մղտեսուն և ընդ Մինաս պալէ ի Սուրբ Գէորք գնացաք առ Աստուածատուր վարդապետն։ Իրիկունս Եաղուպենցն էաք։ Շաբաթ երեկոյիս որ Կիրակի լուսանայր՝ բազում սարուճայք սպանեցին, և պալթաճի ոմն զօրպայ և ճէլալի եղեալ ի դուրսն ըմբռնեալ՝ բերին և զնա ևս սպանին։

Առաւօտուս Բշի (3 Նոյ.) եկաք ի տունս մեր։

Եշի օրս (6 Նոյ.) ելեալ մեր եկեղեցոյ չար իշխանքն[1]) և առեալ ընդ իւրեանս[2]) պատրելով արս ոմանս, խանութէ ի խանութ գնալով և ձայնեալ զնոսա, և զՂալֆան ևս առեալ ընդ իւրեանս մինչև ԺԲ արանց՝ գնացեալ մօտ յԱստուածատուր վարդապետն և գանկատեալ յերիցանց մերոց թէ Ոչ կանգնին ի տեղս իւրեանց ժամու. եւ չը կարեն յանուանէ, այլ զխօսսն հաւսարի դընեն այլ յառաջ գնալով։ Եւ Աստուածատուր վարդապետն հարցանէ թէ Յորմէ՞ ունիք գանկատս. եւ ապա ասեն։ Եւ նա ասէ թէ Նոցա հետ մարդ բան չունի, քանզի նոքա իմ սպասաւորք են։ Յետ այնորիկ ասեն թէ Տո՛ւր մեզ թուղթ աւրհնութեան զի տանիմք յեկեղեցիս մեր եւ ամենեքեան ի տեղս իւրեանց կացցեն։ Եւ կրկին վարդապետն զնոսա արհամարհէ թէ Թուղթ տվող չեմ։ Եւ այլ բանք բազում խօսին անդ, եւ ոչ լեալ հաճոյ վարդապետացն և ելեալ գան ամօթալից։ Գան երեկոյիս և խորհուրդ առնեն։

Եւ առաւօտուս Զշի (7 Նոյ.) միաբանին և ասեն ընդ Տէր Աստուածատուրն մեր թէ Մի՛ մտցես յեկե-

1) իշխ. 2) իւրան.